ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1920—1930-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Լ. Ս. ՋՈՐՅԱՆ

Քսանական թվականների սկզբներից Սովետական Հայաստանի ճարտարապետության առաջնահերթ խնդիրներից էր բնակելի տների նախագծումը։ Քաղաքներում և ընդարձակվող այլ բնակավայրերում բնակչությունը արագորեն աճում էր՝ կապված արդյունաբերության, տնտեսության զարգացման, ինչպես նաև առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ և հետո հայերի գանգվածային ներգաղթի հետ։ Եղած բնակելի տարածությունը անբավարար էր գոյություն ունեցող բնակչության համար ու չէր համապատասխանում նոր, աճող պահանջներին։

Նախագծային աշխատանքներն սկսելուց առաջ անհրաժեշտ էր որոշել բնակելի տների այն տիպերը, որոնք առավել նպատակահարմար էին նոր պայմանների և առկա հնարավորությունների տեսակետից։ Հայաստանի հին բնակելի տները, որոնց մեջ քիչ չէին ճարտարապետական բարձրարժեք ստեղծագործությունները, շատ բան չէին կարող տալ նորի ստեղծման գործում (նկատի ունենալով նոր ժամանակի և նոր տիպի բնակելի տների պահանջները), այնուամենայնիվ նրանց ուսումնասիրությունը շահեկան եզրահանգումների կբերեր նոր բնակելի տների նախագծերում տեղի բնակլիմայական պայմանները հաշվի առնելու, աշխարհի կողմերի նկատմամբ բնակելի տները դիրքորոշելու, պատշգամբների նշանակության, շինանյութերի օգտագործման և այլ հարցերում։ Բայց հին բնակելի տները չէին կարող հիմք հանդիսանալ նորերի համար։ Ժողովրդական բնակելի տունը մասամբ կարող էր նախօրինակ լինել գյուղական վայրերի և ոչ մեծ ավանների բնակելի նոր տների համար միայն սկզբնական շրջանում, երբ շինարարական տեխնիկան, բնակարանի օժանդակ մասերը նման էին հնին։

Քաղաքներում բնակելի շինարարության ծավալման համար պետք էր բնակելի տան այնպիսի տիպ, որը բավարարեր նոր կենցաղի պահանջները և քաղաքի ճարտարապետությանը։ Որոնումները հանգեցրին այն մտքին, որ բնակելի տան ներկայացվող պահանջներին համապատասխան տիպը՝ բազմահարկ, բազմաբնակարան (սեկցիոն) տունն է։ Նպատակահարմար գտնվեց Երևանում և մյուս քաղաքներում կառուցել բազմահարկ բնակելի տներ, թեև եղան դեպքեր, որ մայրաքաղաքում էլ կառուցվեցին մեկ-երկու հարկանի տներ։

Հայաստանում բնակելի նոր շինարարությունը սկսվում է 1925—1926 թթ.՝ մայրաքաղաքում։ Մինչ այդ կատարվում էին միայն նորոգումներ, վրակառուցումներ և հարմարեցումներ։

Կառուցապատման հարկայնությունը ինչ-որ չափով կանխորոշված էր Ա. Թամանյանի 1924 թ. կազմած քաղաքի գլխավոր հատակագծով[1], որի համաձայն Երևանը նախատեսվում էր 150 հազար բնակչությամբ պարտեզ-քաղաք, հետևաբար այն կարող էր լինել սակավահարկ։ 20-ական թթ. սկզբներին Ա. Թամանյանը Երևանը երկու, երբեմն երեք հարկից ավելի բարձր կառուցապատված չէր պատկերացնում ու այդպես էլ նախագծում էր (Անատոմիկումը, Անասնաբուժական ինստիտուտը և այլն)։

Երևանի առաջին բնակելի տները նախագծվում էին քաղաքային սովետի գործկոմին կից ստեղծված տեխնիկական բաժնում, որը գլխավորում էր ճարտարապետ Նիկողայոս Բունիաթյանը։ Այստեղ նախագծված առաջին բնակելի տները ուշագրավ երևույթ էին մեր ճարտարապետության մեջ։ Առաջին բնակելի տները կառուցվեցին (ճարտ. Ն. Բունիաթյան) ներկայիս Թումանյան և Նալբանդյան փողոցներում։ Դրանք մի հարկանի, չորս բնակարանից բաղկացած (երկու երկսենյականոց, երկու՝ երեքսենյականոց) տներ են, որոնց արտաքինը շատ համեստ է ու պարզ։ Հարթությունները ծեփապատ են, անկյուններն ու մուտքի լոջիայի եզրերը՝ քարե շարվածքով։ Շենքերի ծայրերին կան ռիզալիտներ, որոնք ավարտվում են ֆրոնտաներով (դրանք այժմ չկան նոր հարկեր ավելացնելու պատճառով)։ Նրանցից մեկի վրա կառուցվեց երկրորդ հարկ, որի համար բակի կողմից դրվեցին աստիճանավանդակներ, իսկ մյուսի վրա՝ երկրորդ, երրորդ և չորրորդ հարկերը։ Հարկերի այս աստիճանական աճը, կարծեք, Երևանի աճի և նրա քաղաքաշինական մաստաբների մեծացման վկայությունը լինի։ Ն. Բունիաթյանը, այնուհետև նաև մյուս ճարտարապետները, բնակելի տների բակի կողմում նախագծում էին պատշգամբներ։ Դա, անշուշտ, գալիս էր հին Երևանի ճարտարապետությունից։ Երևանի կլիմայական պայմաններում պատշգամբը բնակարանի շատ անհրաժեշտ մասն է, ուր գարնանը, աշնանը և հատկապես ամռանը իրենց օրվա զգալի մասը անց են կացնում բնակիչները։ Ամռան ամիսներին պատշգամբը բնակարանը պաշտպանում է նաև արևի ճառագայթների ներթափանցումից և տաքանալուց։ Հետևաբար, հին Երևանի բնակելի տների այդ մասը (նկատի ունենալով նրա կարևոր ֆունկցիոնալ նշանակությունը) իր տեղը պետք է գտներ նոր բնակարաններում[2]։

Առաջին բնակելի տներին հետևում են նորերը, և հաջորդ տարիներին (1926—1927 թթ.) Երևանի բնակելի շինարարության ծավալն ընդարձակվում է։ Քաղաքի տարբեր փողոցներում, մեկը մյուսի հետևից, բարձրանում են արդեն երկու-երեք հարկանի, աստիճանների ամեն մի հարթակում երկու բնակարաններով (հիմնականում երկու և երեք սենյականոց) սեկցիոն տներ, որոնք ունեն խոհանոց, օժանդակ այլ տարածություններ, փողոցի կողմում՝ փոքր, բակի կողմում կամ շենքի կողքի ճակատին՝ մեծ (տնտեսական) պատշգամբներ. լողարան, սակայն, միշտ չէր նախագծվում։ Այս տներն իրենց երկայնքով մեծ չեն, բնակելի սեկցիան, գրեթե ամեն շենքում, կրկնվում է երկու անգամ։

---

1 Ալ. Թամանյան, Հոդվածներ, փաստաթղթեր. ժամանակակիցները սրա մասին. Երևան, 1960, էջ 19—24։

2 Л. Бабаян. Жилой дом Еревана («Советская архитектура». 1958. № 9 стр. 68—69).

Երևանի առաջին բնակելի տներից է Պուշկինի փողոցում Ա. Թամանյանի նախագծով կառուցվածը։ Սա ավարտվելուց անմիջապես հետո հատկացվեց վարչական հիմնարկի, հետո ուսումնական հաստատության, որի հետևանքով կատարվեցին ներքին վերափոխումներ, այնպես որ, միայն պահպանված նախագիծը կարող է պատկերացում տալ նրա հատակագծային լուծման, բնակարանի կազմակերպման մասին։ Ըստ նախագծի, տան միջին մասը հանրակացարանի տիպի է, իսկ ամեն մի ծայրին երկու երկսենյականոց բնակարաններ՝ իրենց հարմարություններով։ Տունը տեղադրված է փողոցի կարմիր գծից ներս, առջևում ունի մի փոքրիկ պարտեզ։ Այսպիսի տեղադրումը հեռու է պահում փողոցի աղմուկից, դրան նպաստում է նաև պարտեզը։ Տան պլաստիկ մշակված ձևերը, ներդաշնակ համաչափությունները, ծավալից դուրս եկող էրկեր հիշեցնող եռանիստ ծավալները, գեղեցիկ պատշգամբները, մանսարդային հարկը (որ հատկանշական է այդ տարիների մի երկու բնակելի տների) շեշտում են նրա բնակելի լինելու հանգամանքը։ Շենքը երեսպատված է սպիտակ ներկված ծեփով, անկյունները, գոտիները, քիվերը իրականացված են սևագույն քարով՝ ստեղծելով սպիտակ և սև գույների ներդաշնակ համադրություն։

Եթե Թամանյանը իր ստեղծագործական գործունեության ընթացքում քիչ է զբաղվել բնակելի տների նախագծումով, ապա Ն. Բունիաթյանի ստեղծագործության մեջ բնակելի տունը մեծ տեղ է գրավում, և 20—30-ական թվականներին նրա կառուցած բնակելի տները կարևոր նշանակություն ունեն սովետահայ ճարտարապետության համար։ Սկսած 1926—1927 թթ. Ն. Բունիաթյանի նախագծով Երևանի Նալբանդյան և Թումանյան փողոցներում, Հոկտեմբերյան պողոտայում, ուսանողական թաղամասում և այլուր կառուցվում են մի շարք սեկցիոն բնակելի տներ, որոնց աստիճանավանդակի ամեն հարթակում կա երկու բնակարան (մեկը՝ երկու սենյականոց, մյուսը՝ երեք)։ Բնակարաններն ունեն միջանցիկ օդափոխություն։ Ջեռուցումը պատի վառարաններով է։ Տները մեծ չեն, սեկցիան կրկնվում է երկու անգամ։ Նրանց պարզ մշակված ծավալներն ու հարթություններն ունեն հաճելի համաչափություններ, գեղեցիկ նկարված մանրամասներ՝ քիվեր, գոտիներ, շենքի մուտքերով շեշտող ձևեր։ Ճակատների հարթությունները ծածկված են սպիտակ ներկված ծեփով, անկյունները, քիվերը, գոտիները, աստիճանները, գլխավոր ճակատի վրա ընդգծող երիզները իրականացված են սև քարով։ Ճարտարապետական արտահայտչական հիմնական միջոցներն են վարպետորեն օգտագործված սև ու սպիտակ գույները և գեղեցիկ նկարված մանրամասները, որոնցով ստեղծվում է բնակելի տան պարզ, սրտաբաց և հաճելի կերպար։

Նալբանդյան փողոցի տներից մեկի (Նալբանդյան և Մոսկովյան փողոցների խաչմերուկում) շքամուտքերում, աստիճանատունը ընդգծող երիզներում և անկյուններում Ն. Բունիաթյանը փորձել է ստեղծագործական վերաշակումով, զգուշորեն օգտագործել հայ պատմական ճարտարապետության մի շարք ձևեր։ Ճիշտ է, դա ճարտարապետի առաջին փորձերից է և կարելի է այս կամ այն լուծումը քննադատել, սակայն, միաժամանակ, գնահատելի

[3] «История советской архитектуры», М., 1962, стр. 69.

է զուսպ միջոցներով, անդամ մի քանի գծերով ազդային կոլորիտ ստեղծելու ձգտումը։

Ինչպես Թամանյանի նախագծով կառուցված Պուշկինի փողոցի բնակելի տունը, այնպես էլ այս տունը ավարտվում է մանսարդային հարկով, որը որոշ ինքնատիպություն է հաղորդում շենքերին և շահեկան է։ Սակայն Երևանի կլիմայական պայմաններում (շոգ ամառ, ցուրտ ձմեռ) դժվար է մանսարդային հարկում անհրաժեշտ միկրոկլիմա ստեղծել։ Հավանաբար, եղան նաև այլ հանգամանքներ, որոնց պատճառով մանսարդային հարկերը Հայաստանի բնակելի ճարտարապետության մեջ այլևս չկիրառվեցին։

Այս ժամանակաշրջանի Երևանի բնակելի տներից առանձնանում են Թումանյան և Նալբանդյան փողոցների խաչմերուկում Ն. Բունիաթյանի նախագծով կառուցված տները, որ ուշագրավ են նաև քաղաքաշինական տեսակետից։ Թումանյան փողոցի առանցքին սիմետրիկ հիշյալ տները իրար հար և նման են։ Դրանցից յուրաքանչյուրը հատակագծում ունի բեկյալ գծագրություն, դրանք իրար նկատմամբ որոշ անկյան տակ երեք ծավալներ են։ Միջինը երեք հարկանի է, իսկ եզրայինները՝ երկու։ Վերջիններս միմյանց նկատմամբ կազմում են մոտավորապես ուղիղ անկյուն և ամեն մեկը կողքի ճակատով դուրս է գալիս փողոց։ Այսպիսով, ամեն տան առջև առաջացել է փոքրիկ բակ-պարտեզ՝ պարփակված խաչմերուկի փողոցների և տան բեկյալ ճակատագծի միջև։ Բնակելի տների այսպիսի տեղադրումը (երբ նրանց առջև կանաչ տարածություն է) համապատասխանում էր Թամանյանի՝ Երևանը քաղաք-պարտեզ մտահղացմանը։ Այստեղ բնակիչները կանաչի զանգվածով կտրվում են փողոցի աղմուկից, նրանց համար ստեղծվում է համեմատաբար օդավետ և հովասուն միջավայր։ Պարտեզից դեպի մուտքերը ձգվում են պատին կից բաց աստիճաններ, որոնք ներդաշնակում են պարտեզի միջավայրին։ Տները ունեն երկու աստիճանավանդակ, որոնց ամեն մի հարթակում կա երկու բնակարան, մեկը՝ երկու սենյականոց, մյուսը՝ չորս։

Շենքերի ծավալներն ու հարթությունները մշակված են նույն սկզբունքով և միջոցներով, ինչպես Ն. Բունիաթյանի նախագծած մյուս բնակելի տները (սպիտակ ծեփով պատած հարթություններ և սև քար՝ մանրամասներում)։ Այս բնակելի տներին յուրօրինակություն են հաղորդում կենտրոնական բարձր և թևերի ցածր ծավալների պլաստիկ լուծումները, անկյունների երկհարկ լոջիաները, եռհարկ կենտրոնի և երկհարկ թևերի մոտեցման տեղի պատշգամբները՝ ծածկված պերգոլայով (որոնց փաթաթվում է բակից բարձրացող կանաչը) և պարտեզից դեպի մուտքերը տանող բազալտե աստիճանները։

Նալբանդյան և Թումանյան փողոցների խաչմերուկի այս երկու տները միասին ստեղծում են ճարտարապետական իսկական անսամբլ և սովետահայ ճարտարապետության լավագույն գործերից են[4]։ Սակայն, ափսոսանքով պիտի նշել, որ այս հատվածում Ն. Բունիաթյանի մտահղացումը լրիվ չի իրականացել։ Ըստ նրա սկզբնական նախագծի՝ այս տները կրկնվելու էին խաչմերուկի չորս անկյուններում. դրա իրագործման դեպքում կստացվեր

[4] В. М. Арутюнян, К. Л. Оганесян. Архитектура Советской Армении. Ереван, 1955, стр. 31.

ճարտարապետական ամբողջական ու ավարտուն լուծում, իսկ քաղաքաշինական անսամբլը կլիներ ավելի բարձրարժեք։

Նախասովետական ժամանակաշրջանի Լենինականը (Ալեքսանդրապոլ) Հայաստանի այն բնակավայրերից էր, որ XIX դ. վերջում ձևավորվել էր որպես քաղաք և ուներ իր ուրույն ճարտարապետական դեմքը։ Բնակարանի հարցը այստեղ այնպես սուր չէր, ինչպես Երևանում։ Դեռ նոր էր նախապատրաստվում ծավալել Լենինականի բնակելի շինարարությունը, երբ 1926 թ. երկրաշարժը ծանր վնաս պատճառեց քաղաքին. քանդվեցին և վնասվեցին շատ տներ, որ ավելի սրեց բնակելի շինարարության հարցը։

1926 թ. վերջերից երկրաշարժից վնասված բնակելի տների նորոգումների և վերականգնումների հետ մեկտեղ սկսվում է նաև նոր բնակելի տների շինարարությունը։ Այդ գործում նշանակալի դեր է կատարել ճարտարապետ Դավիթ Ջիսլևը (Ջիսլյան), որը քաղաքի կենտրոնական մասի շինարարության համար նախագծում է երեք տիպի բնակելի տներ։ Այդ նախագծերով կառուցապատվում են քաղաքի առանձին մասեր։ Երեք տիպի տներում էլ ճարտարապետը բակի պատշգամբներ չի նախատեսել։ Ճիշտ է Լենինականի կլիմայական պայմաններում բակի բաց պատշգամբները նպատակահարմար չեն, բայց ապակեպատ ձևով շատ ցանկալի են նաև ղով վայրերում։ Մի տիպի տներում աստիճանները տեղադրված են շենքերի անկյունների երկհարկ լոջիաներում։ Այդ տները առավել ուշագրավ են և հաջող իրենց ծավալատարածական լուծումներով։ Այսպիսով, ճարտարապետը ստեղծել է աստիճանների յուրահատուկ ձև, որը ամբողջ շենքին տալիս է ինքնատիպություն և տեղական երանգավորում։ Գուցե Լենինականի պայմաններում վիճելի դիտվի երկհարկ լոջիաներում տեղադրված, գրեթե բաց, աստիճանատունը, այնուամենայնիվ, աստիճանատան լուծումը ճարտարապետական-գեղարվեստական ձևի տեսակետից արժանի է ուշադրության։ Այս բնակելի տների նախագծերում Ջիսլևը հանդես է բերել ստեղծագործական մոտեցում հայ ճարտարապետական ժառանգության հանդեպ և հասել է դրական արդյունքի։

Լենինականում բնակելի տների նախագծով զբաղվել են նաև ճարտարապետներ Գ. Ավետովը և Գ. Սարգսյանը։

Այդ տարիներին Կիրովականում կառուցված բնակելի տները նույնպես երկու հարկանի են և մեծ մասամբ բաղկացած են երկու սեկցիայից։ Աստիճանատների ամեն հարթակում կա երկու բնակարան։ Տների ծավալները և հարթությունները ունեն պարզ մշակում և ներդաշնակ են քաղաքի հին կառուցապատմանը։ Հաճելի ձևեր և գծագրություն ունեն տների պատշգամբների փայտե սյուները, բազրիքները և սղոցանախշ քիվերը։ Մի քանի տներում տեղադրված են փայտե աստիճաններ։

1920-ական թվականների վերջերից ողջ Սովետական Միությունում, ինչպես նաև Հայաստանի արդյունաբերական վայրերում ընդարձակվեց բնակելի շինարարությունը։ Հայաստանի արդյունաբերական վայրերում բանվորների համար կառուցվեցին բնակելի տների առանձին կոմպլեքսներ։ Երևանում կառուցվեց ձեթ-օճառ գործարանի բանվորական ավանը, որի շենքերը միևնույն նախագծի կրկնությամբ կառուցված, երկու հարկանի բնակելի տներ են՝ տեղադրված թաղամասի պարագծով, իսկ թաղամասի միջի կանաչապատ տարածությունը բնակիչների հանգստի, ժամանցի վայր է, ուր

կան նաև խաղահրապարակներ։ Տների պատերը ծածկված են ծեփով, իսկ անկյունները, գոտիները, քիվերը քարից են։

Այդ տարիներին նախագծվում է Լենինականի տեքստիլ կոմբինատի բնակելի կոմպլեքսը և սկսվում է դրա իրականացումը։

Ա. Ահարոնյանի նախագծով մի շարք բնակելի տներ են կառուցվում Ալտվերդում։ Քաղաքի կենտրոնին մոտ տեղադրված տուֆակերտ այդ տները ունեն հարմարավետ բնակարաններ, մի քանիսի դլխավոր ճակատները մշակված են հաշող։ Աստիճանատների առաջ եկող ծավալների ռիթմիկ քայլը և աշխույժ լուսաստվերը նպաստում են տան արտահայտչականությանը։

Բնակելի շինարարություն ծավալվում է նաև հանրապետության նոր հիմնադրված ավաններում։ Այսպես, Ալ. Թամանյանի նախագծերով մի հարկանի բնակելի տներ են կառուցվում նրա հատակագծով իրականացվող Լուկաշին ավանում, որոնց նախագծերը տիպարային նախագծեր ստեղծելու առաջին օրինակներից են։

Բանվորական ավանների նախագծերի մեջ հետաքրքիր լուծում ունի Մ. Մաղմանյանի նախագծած Ղափանի բանվորական ավանը, որը չի կառուցվել։ Նախագիծն ունի ինքնատիպ մտահղացում, ճարտարապետական մարմնավորումը, սակայն, սխեմատիկ է։ Ըստ նախագծի, թեք տեղանքի վրա տները տեղավորվելու էին աստիճանաձև՝ մեկի տանիքը մյուսի համար ծառայելու էր իբրև բակ և այսպես վարից վեր, ամբողջ լանջով։ Ճարտարապետը բանվորական ավանի այս նախագծում հիմք է ընդունել Հայաստանի լեռնային բնակավայրերի կառուցապատման ավանդական ձևը։

1929—1930 թթ. ճարտարապետներ Ա. Ահարոնյանը և Հ. Մարգարյանը մշակեցին բազմահարկ բազմաբնակարան բնակելի սեկցիաների տիպարային նախագծեր, որոնք առաջիններից էին մեր ճարտարապետության մեջ։ Այդ տարիներին կառուցված բնակելի տների սեկցիաների համեմատությամբ դրանք ունեն առավելություններ՝ ֆունկցիոնալ հստակ լուծում, բնակարանի հարմար կազմակերպում։ Ամեն սեկցիայում կա երկու բնակարան։ Տիպարային այս սեկցիաները մշակված են տարբեր կազմով բնակարանների համար՝ 2,5 սենյականոց և 3 սենյականոց։ Բնակարանները և՛ փողոցի և՛ բակի կողմից ունեն լոջիաներ (բակի կողմինը մեծ է և խորը), որոնք բնակարանի օրգանական մասն են կազմում։ Տիպարային այս սեկցիաներում կից բնակարանների լոջիաները (այդ տարիների այլ տներում նույնպես) լուծվել են որպես ընդհանուր տարածություն։ Սակայն փորձը ցույց տվեց, որ դրանք հարմար չեն, և բնակիչները միջնապատով կիսում են այդպիսի լոջիաները կամ պատշգամբները։

Ա. Ահարոնյանի և Հ. Մարգարյանի սեկցիան կիրառվել է նույն հեղինակների նախագծով կառուցված (Աբովյան փողոցում՝ նախկին «Հայպետշին» կազմակերպության և Նալբանդյան փողոցում՝ Անասնաբուծական ինստիտուտի) բնակելի տներում։ Այս տների ընդհանուր առմամբ պարզ, հստակ ձևերին և տարածա-ծավալային լուծումներին հատուկ է նաև պարզունակություն և որոշ սխեմատիկություն։

Գրեթե նման լուծում ունեն Լենինի և Թումանյան փողոցների խաչմերուկում կառուցված «Ինտերնացիոնալ» և «Իլյիչ» կոչվող բնակելի տները, ինչպես նաև այդ հանգույցի մյուս տները (ճարտ.՝ Ն. Բունիաթյան), որոնց նա-

խորդներից տարբերվում են իրենց չափերով։ Եթե ուսումնասիրվող ժամանակաշրջանի սկզբում (մասամբ էլ հետագա տարիների) բնակելի տները կառուցվում էին երկու սեկցիայից, ապա սրանք արդեն բաղկացած են 3—4, նույնիսկ ավելի սեկցիաներից և իրենց չափերով ունեն քաղաքաշինական նշանակություն։ Հիշյալ տների ծավալների և հարթությունների մշակման մեջ նկատելի է կոնստրուկտիվիստական ճարտարապետության[5] ձևերի օգտագործում։ Դա ավելի բնորոշ է ճարտարապետ Տ. Երկանյանի նախագծով կառուցված կաուչուկի գործարանի մեծածավալ բնակելի տանը (կառուցված Գնունի, Ալավերդյան, Տպագրիչների փողոցների մեջ ընկած թաղամասի պարագծով) ուր օգտագործված է կոնստրուկտիվիստական ճարտարապետության գրեթե ողջ զինանոցը։

Ճարտարապետներ Կ. Հալաբյանի և Մ. Սազմանյանի նախագծով Պարոնյան փողոցում կառուցված Երևանի հիդրոէլեկտրակայանի աշխատողների տունը ունի մի շարք առանձնահատուկ կողմեր։ Գլխավոր ճակատում լոջիաները ունեն շախմատաձև դասավորություն։ Այս բնակելի շենքը սրահային տիպի[6] է։ Իրականացված է նախատեսված ծավալուն համալիրի միայն այս մասը։ Կառուցված տանը զուգահեռ կառուցվելու էր նման մի այլ բնակելի շենք, իսկ սրանց միջև ընկած տարածությունում՝ բնակելի կոմպլեքսի սպասարկող մասը, ուր պիտի լիներ ճաշարան, խոհանոց, լվացքատուն, մսուր-մանկապարտեզ և այլն։ Չիրականացված բնակելի տան հակառակ կողմում, դեպի Հրազդանի ձորը, նախատեսվում էր ակումբ։ Կոմպլեքսի սպասարկող մասը և ակումբը բնակելի մասերի հետ կապվելու էին տաք անցումներով։ Պիտի ենթադրել, որ հասարակական մասի և բնակելի մասի փոխադարձ կապի համար է ընտրված տների սրահային տիպը, սակայն այս տան բնակարաններն, իրենց կազմով ու դասավորությամբ, հիշեցնում են սեկցիոն բնակելի տների բնակարանները։ Թվում է, թե անհանգիստ սրահի առկայության պայմաններում ամեն մի բնակարան գլխավոր ճակատում պիտի ունենար իր առանձին լոջիան, բայց այդպես չէ։ Այստեղ ևս լոջիան ընդհանուր է երկու կից բնակարանի համար։ Բնակելի այս տունը իր ժամանակի ճարտարապետության հետաքրքիր երևույթներից է և նրա նախագիծը հիշեցնում է այդ տարիներին Սովետական Միությունում տարածված կոմունա-տները[7]։ Նախագծում առկա է այն շահեկանը, որ կա կոմունա-տների մտահղացման մեջ։ Սակայն կան նաև այն ծայրահեղությունները, որ հատուկ էին կոմունա-տների գրեթե բոլոր նախագծերին։ Կոմունա-տների նախագծերի հեղինակները գտնում էին, որ դա ճանապարհ է կենցաղի հասարակայնացման, որ ընտանիքը հին հասկացողությամբ այլևս չի լինելու և այլն։ Կոմունա-տների կողմնակիցներն այն ներկայացնում էին որպես նոր կենցաղ կազմակերպող գործոններից մեկը։ Այս տիպի բնակելի տների նախագծերում, ձախլիկ գա-

---

[5] «История советской архитектуры», М., 1962, стр. 14. Ю. Савицкий. Этапы развития советской архитектуры («Советская архитектура», Сборник Союза архитекторов СССР. М., 1958, № 9, стр. 9).

[6] Նկատենք, որ սրահային տիպն այլևս չկիրառվեց Հայաստանի բնակելի շինարարության մեջ, թեև ունի տնտեսական լավ ցուցանիշներ։ Լայն կիրառություն ստացած սեկցիոն տունը բնակարանի ֆունկցիոնալ կազմակերպման տեսակետից ունի մի շարք առավելություններ։

[7] Г. Н. Любимова, Поиски новых типов жилища в советской архитектуре 20-х годов («Вопросы современной архитектуры», Сборник 1, М., 1962, стр. 227—263).

դափարների կողքին, կային նաև ռացիոնալ կողմեր. ինչպես, օրինակ, բնակելի տան կից սպասարկող մասը (մսուր-մանկապարտեզ, լվացքատուն և այլն)։

Բացի վերոհիշյալ տնից, Կ. Հալաբյանը և Մ. Մազմանյանը Երևանի մեխանիկական գործարանի աշխատողների համար նախագծել էին մի այլ բնակելի տուն, որը չկառուցվեց։ Սա չափերով նախորդից ավելի մեծ և կազմով ավելի բարդ մի կոմունա-տան նախագիծ է, որտեղ նույնպես տեղ են գտել այդ տիպին հատուկ ծայրահեղություններ։ Ե՛վ այդ ծայրահեղությունների, և՛ ձախլիկ առաջարկությունների պատճառով կոմունա-տները կյանքում քննություն չբռնեցին[8]։

Այս նույն ժամանակ, ճարտարապետ Ս. Սաֆարյանի նախագծով, Արովյան փողոցում կառուցվում է հինգ հարկանի մի բնակելի տուն, որ արժանի է ուշադրության։ Եթե քննարկվող ժամանակաշրջանի սկզբնական տարիներին (1926—1927) բնակելի շենքերը կառուցում էին երկու-երեք հարկանի, ապա վերջին տարիներին, քաղաքի աճի և քաղաքաշինական այլ խնդիրների հետ կապված, փոխվում են կառուցապատման մասշտաբը և հարկայնության խնդիրը, որի առաջին օրինակներից մեկը հիշյալ բնակելի տունն է։ Այն բաղկացած է երկու սեկցիայից, աստիճանների ամեն հարթակում կա երկու բնակարան՝ երկուսենյականոց և երեքսենյականոց, ամեն բնակարան բակի կողմում ունի իր առանձին լոջիան և լոջիա կամ պատշգամբ՝ փողոցի կողմում։ Սակայն բնակարաններն ունեն նաև մի շարք թերություններ. բակի լոջիաները փոքր են, խոհանոցը տեղադրված է փողոցի կողմի լոջիային կից և ելք չունի դեպի այն։ Գլխավոր ճակատի լոջիաների և պատշգամբների ռիթմը, աստիճանատների վերից վար անընդմեջ ապակեպատ շերտերը, վերնահարկում գտնվող նկարչական արվեստանոցների մեծ բացվածքները շենքին տալիս են բնակելի տան յուրահատուկ կերպար։ Միաժամանակ զգացվում է արտահայտչական միջոցների ավելորդ զսպվածություն և պլաստիկայի պակաս, սակայն տուֆը իր գույնով և երանգներով որոշ չափով մեղմում է այդ բացը և նպաստում տան արտահայտչականությանը։ Լավ է գտնված շենքի մասշտաբը լայն փողոցի և մեծ քաղաքի համար։

Ճարտարապետներ Կ. Հալաբյանը, Հ. Մարգարյանը, Ս. Սաֆարյանը, Մ. Մազմանյանը և Ա. Ահարոնյանը այդ ժամանակ ընդգրկված էին «Պրոլետարական ճարտարապետների միավորման»[9] մեջ և նրանց նախագծած շենքերին, այս կամ այն չափով, հատուկ են ճարտարապետական այդ միավորման սկզբունքների դրական ու բացասական կողմերը, որոնք իրենց արտահայտությունը գտան վերոհիշյալ բնակելի տներում։ Դրանք են՝ բնակարանի ներքին տարածության ռացիոնալ և շահավետ լուծում, կլիմայական ու կենցաղային պայմանները նկատի ունենալը, կոնստրուկտիվ լուծման կատարելագործում, սակայն, առկա են ճարտարապետական կերպարի պարզունակ մեկնաբանում, սխեմատիկ և անարտահայտիչ ծավալային կոմպոզիցիա և ընդհանրապես արտահայտչական միջոցների աղքատացում։ Սովետական Միության շատ քաղաքներում «20-ական թվականների վերջի և 30-ական թվականների սկզբի բնակելի տների կերպարում շատ նկատելի էր կոնս-

---

[8] «Советская архитектура за 50 лет», М., 1968, стр. 21.

[9] «Ակնարկ հայ ճարտարապետության պատմության», Երևան, 1964, էջ 250—263։

տրուկտիվիզմի ձևական հնարների ընդօրինակում»[10]։ Այս երևույթը կար նաև մեզանում։ Եվ եթե կոնստրուկտիվիստական գործերում այդ հնարները պայմանավորված էին նոր շինանյութերով և նրանց հատկություններով, ապա մեզանում դրանք միայն արտաքին ինքնանպատակ ձևեր էին։ «Կոնստրուկտիվիզմի գեղարվեստական միջոցները, որ ծագել էին երկաթբետոնի կոնստրուկցիաների կիրառման պայմաններում, փոխադրվում էին մեր պրակտիկան, որպես դեկորատիվ, արտահայտչական միջոցներ»[11]։

Քննվող ժամանակաշրջանում Երևանի բնակելի շինարարության նախագծման ասպարեզում աշխատել են նաև ճարտարապետներ Ֆ. Աղալյանը և Ա. Խիզանյանը։ Առաջինի նախագծով Լենինի պողոտայում կառուցված տունը հայ պատմական ճարտարապետության ձևերով «ճավորելու փորձ է։ Ա. Խիզանյանի նախագծով Աբովյան փողոցում (Մոսկովյան և Աղայան փողոցների միջև) կառուցվեց մեկ սեկցիայից բաղկացած, երկհարկանի տուն, ուր. ինչպես այդ տարիների մի շարք շենքերում, օգտագործված են սպիտակ ներկված ծեփը և սև քարը մանրամասներում (քիվ, գոտիներ)։

Երևանում այդ տարիներին կառուցվել են նաև մի շարք առանձնատներ և բլոկացված տիպի բնակելի տներ՝ Աղայան, Ղուկասյան, Նալբանդյան փողոցներում և այլուր։ Դրանցից ուշագրավ է Ալ. Թամանյանի նախագծով Հրազդանի ձորում կառուցված Մինիստրների սովետի առանձնատունը, ճարտարապետներ Հ. Մարգարյանի և Ս. Սուֆարյանի նախագծով կառուցված տունը՝ Աղայան փողոցում, որի արտաքինը, սակայն, ծայրաստիճան պարզունակ է, և ավելի շեշտված նկատվում է այն մոտեցումը, որ հատուկ էր այդ ճարտարապետների վերը նշված բնակելի տներին։

Հիշատակվածներից բացի, Հայաստանի քաղաքներում կառուցվել են նաև այլ բնակելի տներ։ Այստեղ ներկայացվեցին միայն տվյալ ժամանակաշրջանի համար բնորոշ և ճարտարապետական առումով հատկանշական տները։

Ի մի բերելով 1920—1932 թթ. Հայաստանի բնակելի շինարարության մասին ասվածը, նշենք, որ այդ շրջանում ձևավորվում են Հայաստանի համար բնակելի տան մի շարք հիմնական հատկանիշներ։

Սեկցիոն տիպի տունը դառնում է ամենաընդունելին բնակելի շինարարության համար։ Հիմնականում որոշվում են բնակարանների կազմը և բնույթը (երկուսենյականոց, երեքսենյականոց, հաղվադեպ՝ չորսսենյականոց)։ Այդ շրջանի ճարտարապետության ուշագրավ և կարևոր նորություններից է բնակելի տների ու սեկցիաների կրկնվող և տիպարային առաջին նախագծերը։ Բակի մեծ պատշգամբը դառնում է բնակարանի պարտադիր մասը, որպես բնակարանի անհրաժեշտ տարածություն։ Բնակարանների համար կարևոր և պարտադիր պայման է դառնում միջանցիկ օդափոխությունը։

1920—1932 թթ. բնակելի շինարարության մեջ կիրառված սեկցիաները տարբեր են ոչ միայն հատակագծի լուծումով ու կոնստրուկտիվ կազմով, այլև բնակարանների մակերեսների չափերով։ Տարբեր են նաև բնակելի հարկերի բարձրությունները (3,15 մ, 3,5 մ, հանդիպում են նաև ավելի)։

---

10 «История советской архитектуры», стр. 59.

11 Նույն տեղում, էջ 60։

Ինչպես տեսանք, ուսումնասիրվող ժամանակաշրջանի սկզբում տները երեսպատվում էին ծեփով, միայն մանրամասներն էին իրականացվում քարով, իսկ վերջում՝ պատերի շարվածքի քարը, գլխավորապես տուֆը, շնորհիվ իր դեկորատիվ հատկությունների, միաժամանակ հանդես է գալիս որպես շենքի հարթությունները և ծավալը ձևավորող շինանյութ՝ կոպտատաշ կամ սրբատաշ ձևով։

Սովետահայ ճարտարապետության առաջին փուլում (1920—1932 թթ.) կառուցված բնակելի տների դդալի մասը՝ իրականացված Ալ. Թամանյանի, Ն. Բունիաթյանի, Կ. Հալաբյանի, Մ. Մաղմանյանի, Ս. Սաֆարյանի, Հ. Մարգարյանի, Ա. Ահարոնյանի, Դ. Զիսլյանի և այլ ճարտարապետների նախագծերով, մեր քաղաքների կառուցապատման մեջ պահել է իր ճարտարապետական դերն ու նշանակությունը։

АРХИТЕКТУРА ЖИЛЫХ ДОМОВ В СОВЕТСКОЙ АРМЕНИИ В 1920—1930-ые ГОДЫ

Л. С. ЗОРЯН

Резюме

В начальный период развития армянской советской архитектуры определились основные черты жилых домов для условий Армении. Секционный дом становится наиболее приемлемым в строительстве. Определяются состав и структура жилых домов. Примечательное явление этого периода—проекты первых типовых домов и секций, применяемые в жилищном строительстве республики. Осуществленные в течение рассматриваемого периода жилые дома сохранили свое значение в застройке городов Армении.